# ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՏՖԱՆՕ» (ՆԱՔԱՐԹՅԷԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 47 - 48 (16748) ՇԱԲԱԹ 15 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ՇԱՏ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԱՄՆ-Ի ՀԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ ԵՆ»



*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հունիսի 5-14-ը աշխատանքային այցով գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում:*

Այցի գլխավոր նպատակը ամերիկյան խոշորագույն կորպորացիաներին Վրաստանի ներդրումային կլիմային ծանոթացնելն էր: ԱՄՆ-ում Վրաստանի վարչապետը մասնակցեց համատեղ ուժերով կազմակերպված բիզնես-համաժողովներին, ամերիկյան գործարարների հետ հանդիպումներին: Մամուկա Բախտաձեն հանդիպումներ ունեցավ նաեւ ԱՄՆ պաշտոնատար անձանց հետ: Մասնավորապես, հունիսի 11-ին կայացավ Մամուկա Բախտաձեի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղար Մայք Փոմփեոյի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության խորացման, համատեղ ծրագրերի իրականացման հար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԱՄՆ-ՎՐԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ



*Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի կայք-էջում հրապարակվել է ԱՄՆ-ի եւ Վրաստանի ռազմավարական գործընկերության 10-րդ տարելիցին նվիրված համատեղ հռչակագիր:*

Փաստաթղթում ասվում է, որ հունիսի 11-ին նշվում է ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության խարտիայի 10-ամյա հոբելյանը, եւ այդ օրը ԱՄՆ-ն ու Վրաստանը մեկ անգամ եւս հաստատեցին երկու երկրների ռազմավարական գործընկերության նկատմամբ հավատարմությունը եւ բարեկամության գլխավոր սկզբունքները:

- 2009 թվականից մինչ օրս ԱՄՆ-ը եւ Վրաստանը միասին աշխատում են, որպեսզի աջակցեն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԴԵՊԻ ՆԱՏՕ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՎԱՐՏՎԻ»




*Հունիսի 11-12-ը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ժնեւում:*

Այցի շրջանակներում, երկրի նախագահը հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար Ֆիլիպպո Գրանդիի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին փախստականներին վերաբերող մի շարք հարցեր, անդրադարձ կատարվեց նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքների թեմային: Ֆիլիպպո Գրանդին բարձր գնա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

## ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ «1+4» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Հունիսի 8-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլու մասնակցությամբ, կայացավ գերատեսչության նախաձեռնությամբ պետական գերատեսչություններում անցկացված «1+4» պետական ծրագրի շրջանավարտների գործնական պարապմունքների գնահատման եւ «էթնիկ փոքրամասնությունների շրջանում բարձրագույն ու մասնագիտական կրթության մատչելիության աջակցության» ծրագրի արդյունքների հանրագումարումը, ընդգծվեցին ծրագրի ձեռքբերումները, սահմանվեցին մարտահրավերները եւ դրանց կարգավորման ուղիները:*

Բարձր գնահատելով իրականացված աշխատանքի արդյունքները՝ հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարը նշեց, որ դա թույլ տվեց հայտնաբերել ոչ միայն ձեռքբերումները, այլեւ ծրագրի առանձին թերացումները:

- Կարող ենք եզրակացնել, որ մեր քաղաքացիները, էթնիկ որ փոքրամասնության ներկայացուցիչ էլ լինեն, ուզում են կրթությունը շարունակել իրենց հայրենիքում, այստեղ տեղավորվել աշխատանքի եւ ապրել, ինչը շատ բնական

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ 37-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ





Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեին ծննդյան տարեդարձի առիթով: Հունիսի 9-ին Մամուկա Բախտաձեն դարձավ 37 տարեկան:

Նիկոլ Փաշինյանի ուղերձում ասված է.

«Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ ծննդյան տարեդարձի առթիվ: Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին ցանկանում եմ խաղաղություն, քաջառողջություն եւ երջանկություն: Հաջողություններ ու նորանոր ձեռքբերումներ եմ մաղթում նաեւ Ձեր պատասխանատու ու անչափ կարեւոր գործում:

Վստահ եմ, որ համատեղ ջանքերով մենք առավել կամրապնդենք մեր ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու կընդլայնենք մեր պետությունների համագործակցությունը: Ես լի եմ լավատեսությամբ մեր ժողովուրդների ապագայի նկատմամբ: Համոզված եմ, որ ընդհանուր արժեքների վրա խարսխված հայ-վրացական հարաբերությունները շարունակական զարգացմամբ նպաստելու են մեր երկրների առաջընթացին ու բարեկեցությանը»:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՌԱՆՑ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ

*Հունիսի 13-ին Վրաստանի խորհրդարանում անցկացվեց խորհրդատվական հանդիպում խորհրդարանական մեծամասնության եւ ընդդիմադիր փոքրամասնության ոչ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների ու ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:*

Բացելով հանդիպումը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ ընտրական բարեփոխումների իրականացման շուրջ աշխատանքային գործընթացը կարելի է համարել սկսված, եւ այն հիմնված է ԵԱՀԿ-ի հանձնարարականների վրա եւ բոլոր սկզբունքային հարցերի շուրջ դիրքորոշումները կհամաձայնեցվեն:

- Սկսում ենք բարդ, սակայն հետաքրքիր գործընթաց: ԵԱՀԿ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Ինչպես տեղեկացրել է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի մամլո ծառայությունը, հունիսի 13-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում ընդունեց Վիրահայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Հուսիկ քահանա Հարությունյանի:*



Տեր Հուսիկ քահանան Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ վիրահայերի ուխտագնացության նպատակը Մայր Աթոռի սրբությանն ու զորությանը հաղորդակցվելն է ու Ամենայն Հայոց Կաթողիկոսից հայրական օրհնություն ստանալը:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը փոխանցեց ուխտավորներին:

Գարեգին Երկրորդ Հայրապետը փաստեց, որ քանիցս հովվա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

# ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ՇԱՏ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԱՄՆ-Ի ՀԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ ԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցեր, տարածաշրջանային անվտանգության ապահովման հետ կապված հարցեր: Հանդիպման ավարտից հետո անցկացված համատեղ մամլո ասուլիսում, Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ ***Վրաստանի բազմաթիվ ձեռքբերումներ ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության հաջողության ուղղակի արդյունքն է, որի մեկնարկի 10 տարին նշվում է հիմա:*** Նա Մայք Փոնփեոյին շնորհակալություն հայտնեց Վրաստանին աջակցելու համար:

Վարչապետի հավաստմամբ, ***անվտանգության ոլորտում Վրաստան-ԱՄՆ համագործակցության մակարդակն այսօր աննախադեպ նշանաբանի վրա է:***

Կառավարության ղեկավարը նշեց, որ միջազգային ասպարեզում Վրաստանը Ամերիկայի հավատարիմ գործընկերն է:

Վարչապետը Ամերիկայի Միացյալ Նահանգներին շնորհակալություն հայտնեց ՆԱՏՕ-ին ինտեգրման ճանապարհին Վրաստանին աջակցելու համար:

Իր հերթին, ԱՄՆ պետքարտուղարը վերահաստատեց ամերիկյան ղեկավարության կողմից Վրաստանին աջակցության ցուցաբերման պատրաստակամությունը:

- ***Վրաստանի ջանքը հզորացնում է հավատս, եւ նախագահ Թրամփի ու ԱՄՆ ողջ կառավարության անունից հայտարարում եմ, որ դուք չեք զգա աջակցության պակաս Ամերիկայի Միացյալ Նահանգներից ՆԱՏՕ-ին անդամակցության ճանապարհին,***- հայտարարեց Մայք Փոմփեոն եւ հավելեց.

- ***Մենք կոչ ենք անում ՆԱՏՕ-ի բոլոր դաշնակիցներին պաշտպանել այս թիրախը: Վրաստանն իր տարածքային ամբողջականությունը պահպանելու համար պայքարել է Ռուսաստանի ագրեսիայի, տարածքների անօրինական բռնազավթման դեմ եւ դարձել Ռուսաստանի կողմից խաղաղության համաձայնագրի ձախողման վկան:***

***Ռուսաստանի ագրեսիայի պատճառներից մեկն էլ այն է, որ մենք հպարտանում ենք Վրաստանի հետ մեր ռազմական աջակցությամբ, որն օգտագործվում է Վրաստանի պաշտպանության համակարգում: Մենք նաեւ օգնում ենք այս երկրին՝ իր տարածքների պաշտպանությունը ապահովելու համար, աջակցում զորավարժություններին եւ սարքավորումներ տրամադրում: Ի վերջո, այս ջանքերը կապահովեն ամբողջ տարածաշրջանի անվտանգությունը, որը լավ է Վրաստանի, ԱՄՆ-ի եւ ամբողջ աշխարհի համար:***

ԱՄՆ պետքարտուղարը խոսեց նաեւ ռազմավարական գործընկերության խարտիայի 10-ամյա հոբելյանի թեմայով եւ նշեց, որ հոբելյանական հռչակագրում սահմանված են երկկողմ հարաբերությունների առաջիկա ուղղությունները:

- ***Հույս ունեմ, որ հարաբերությունները կրկին կընթանան սերտ բարեկամական ոգով եւ կհիմնվեն ընդհանուր պարտականությունների վրա: Վրաստանն ստանձնել է առաջատարի դերը՝ որպես ՆԱՏՕ-ի անդամության թեկնածու դաշնակից, եւ հավանաբար, սա այն պատճառներից է, որի համար սերտ համագործակցում ենք,***- նշել է Մայք Փոմփեոն:

ԱՄՆ Վրաստանի վարչապետի այցի շրջանակներում, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը եւ ԱՄՆ-ի առեւտրի նախարարությունը Վաշինգտոնում ձեւակերպեցին պայմանագիր, որի համաձայն, ԱՄՆ-ը ձեռնամուխ է լինում Թբիլիսիում առեւտրային ներկայացուցչության ստեղծմանը:

Մեկնաբանելով ստորագրած պայմանագիրը՝ Մամուկա Բախտաձեն նշեց.

- ***Մենք ԱՄՆ-ի հետ ստորագրել ենք անչափ կարեւոր փաստաթուղթ եւ առաջիկայում եւս ստորագրելու ենք շատ կարեւոր փաստաթղթեր: Չեմ ցանկանում առաջ ընկնել իրադարձություններից: ԱՄՆ-Վրաստանի միջեւ ռազմավարական գործընկերությունն անցել է ավելի բարձր մակարդակի: Կոնգրեսը նախաձեռնել է կարեւորագույն օրինագիծ, որտեղ այդ թվում դրված է շեշտ, որ երկու երկրների միջեւ պետք է կնքվի Ազատ առեւտրի պայմանագիր***:

Վաշինգտոն այցի ավարտին, Մամուկա Բախտաձեի անունից Վրաստանի Անկախության օրվան նվիրված անցկացվեց ընդունելություն:

# ԱՄՆ-ՎՐԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի ինքնիշխանությանը, անկախությանը եւ տարածքային ամբողջականությանը՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Մենք միասին էինք պայքարում, մեր զինվորները միասին են կրել զոհեր՝ Իրաքում եւ Աֆղանստանում: ԱՄՆ-ն աջակցում էր Վրաստանի ինտեգրմանը գլոբալ քաղաքականությունում, որը շահավետ է երկու կողմերի համար: ԱՄՆ-ը շարունակում է աջակցել Վրաստանի բարեփոխումներին եւ ողջունում դրանք»,- նշված է փաստաթղթում:

Պետական դեպարտամենտի կայք-էջում հրապարակված հռչակագրում խոսվում է ռուսական ագրեսիայի եւ Վրաստանի պաշտպանունակության կողմից ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման նշանակության մասին: Փաստաթղթում ընդգծված է ԱՄՆ-ի աջակցությունը Վրաստանի ՆԱՏՕ-ին անդամակցության ճանապարհին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՌԱՆՑ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ը ներկայացրել է իր հանձնարարականներն ընտրական օրենսդրության շուրջ: Ներկայացված է 27 հանձնարարական, աշխատանքային գործընթացը հիմնված է լինելու այս հանձնարարականների վրա: Յուրաքանչյուր կետի մասին անցկացվելու է քննարկում, եւ վստահ եմ, բոլոր սկզբունքային հարցերի շուրջ կկարողանանք համաձայնեցնել դիրքորոշումները: Չնայած, որ թեման քաղաքական առումով շատ զգայուն է, կան բազմաթիվ սուբյեկտիվ շահեր,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Ավելացնենք, որ հունիսի 13-ին ընդդիմադիր 20 կուսակցություններ խորհրդարանին ներկայացրին արդեն 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները միայն համամասնական ընտրահամակարգով անցկացնելու պահանջով 250 հազար ստորագրություններ: Ինչպես նշեցին ստորագրահավաքի կազմակերպիչները, միջազգային հանրությունը կիսում է այն կարծիքը, որ մեր երկրում արդեն 2020 թվականին ընտրություններն անցկացվեն համամասնական ընտրակարգով:

Ընտրական բարեփոխումների շուրջ խորհրդատվությունները կշարունակվեն

ՆՇԱՆԱԿՈՒՄ



# ԶՈՒՐԱԲ ԽԱՉԻՁԵՆ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏ

## «ՀԻՇԵՔ ԶԵԼԵՆՍԿՈՒՆ, ՇՎԱՐԵՑՆԵՆԵԳԵՐԻՆ, ՌԵՅԳԱՆԻՆ...»

Ծնունդով Բորժոմիից, ճանաչված երգիչ, «Քուչիս բիճեբի» վոկալ համույթի հիմնադիր եւ մենակատար, 40-ամյա Զուրաբ Խաչիձեն նշանակվել է Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի պետական լիազոր նահանգապետի տեղակալ: Նա գործելու է մշակույթի, սպորտի, կրթության եւ ինքնակառավարման մարմինների հետ հարաբերության ուղղությամբ:

Նշենք, որ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի պետական լիազոր, նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու գլխավոր աշխատակազմում Զուրաբ Խաչիձեն երրորդ տեղակալն է: Նահանգապետի առաջին տեղակալը Շալվա Բերձենիշվիլին է, տեղակալը՝ Շոթա Ռոստիաշվիլին:

Մեկնաբանելով Սամցխե-Ջավախեթիի երկրամասի փոխնահանգապետի պաշտոնում իր նշանակման փաստը՝ Զուրաբ Խաչիձեն հայտարարեց, որ երբ միանում ես քաղաքական որեւէ ուժի, անկախ նրանից, թե որքանով ես հանրահայտ, անվերապահորեն, ի հայտ են գալիս կողմնակիցներ եւ ընդդիմախոսներ.

- Չէի ուզի զուգահեռներ անցկացնել, սակայն հիշեք Զելենսկուն, Շվարցենեգերին, Ռեյգանին... Հաճախ են երգիչներն ու դերասանները մուտք գործում քաղաքականություն եւ բավական հաջողությամբ են գործում,- հայտարարեց Զուրաբ Խաչիձեն եւ հավելեց.

- Ես այդ ամենին ուշադրություն չեմ դարձնում, ինձ համար ամենակարեւորը Սամցխե-Ջավախեթիում առկա իրավիճակն է, տեղի հասարակության հետ կապն ու նահանգապետի հետ մարդկանց անհանգստացնող հիմնախնդիրների կարգավորումը:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պետական այցով եղել է Վրաստանում եւ ականատեսը դարձել վիրահայերի զորավոր հավատքին, որի շնորհիվ նրանք կարողացել են պահպանել եւ աշխույժ պահել իրենց ազգային, հոգեւոր եւ մշակութային կյանքը:

Վերջում Նորին Վեհափառությունը հայորդիներին մաղթեց, որ Աստված նորոգի նրանց ուխտը՝ մշտապես պահելով Իր սիրո եւ խաղաղության մեջ:



ՂԱԶԱԽՍՏԱՆ

## ՔԱՍԸՄ-ԺՈՄԱՐՏ ՏՈԿԱԵՎԸ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Հունիսի 9-ին Ղազախստանում անցկացվեցին արտահերթ նախագահական ընտրություններ:*

*Ինչպես տեղեկացրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, երկրի գործող նախագահ Քասըմ-Ժոմարտ Տոկաեւը հավաքել է ձայների 70,76 տոկոսը: Նախագահության մյուս թեկնածուներից, խորհրդարանի ստորին պալատի պատգամավոր Դանիա Եսպաեւան ստացել է ընտրողների ձայների 5,2, լրագրող եւ քաղաքական գործիչ Ամիրժան Կոսանովը՝ 16,2 տոկոսը:*

*Հունիսի 12-ին Ղազախստանի նորընտիր նախագահ Քասըմ-Ժոմարտ Տոկաեւը նախագահական երդմամբ ստանձնեց պետության ղեկավարի պաշտոնը:*

ՄՈԼԴՈՎԱ

## ՍՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

*Մոլդովայում քաղաքական իրավիճակը սրվեց նրանից հետո, երբ Մոլդովայի խորհրդարանը փետրվարի 24-ի ընտրություններից հետո փորձում էր կազմել կառավարող կոալիցիա եւ կառավարություն: Միայն հունիսի 8-ին նախագահ Իգոր Դոդոնին աջակցող սոցիալիստներն ի վերջո Acum դաշինքի հետ համաձայնության եկան հանդես գալ նախորդ խորհրդարանը եւ նախարարների կաբինետը վերահսկող Մոլդովայի դեմոկրատական կուսակցության (ՄԴԿ) դեմ: Սահմանադրական դատարանը անօրինական ճանաչեց կոալիցիայի եւ կառավարության ձեւավորումն ու վարչապետի պաշտոնակատար եւ ՄԴԿ-ի անդամ Պավել Ֆիլիպին թույլ տվեց, նախագահի փոխարեն, հրամանագիր ստորագրել խորհրդարանի արձակման մասին: Դոդոնը դա գնահատեց որպես իշխանության բռնատիրման փորձ եւ իր հրամանագրով վերացրեց խորհրդարանի արձակման մասին կարգադրությունը:*

ՈՒԿՐԱԻՆԱ

## ԼՈՒՐՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

*Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, նախարարների կաբինետի ներկայացմամբ, պաշտոնանկ է արել երկրի մարզային պետական վարչակազմերի 15 ղեկավարների:*

*Աշխատանքից ազատվել են Չեռնիգովի, Խմելնիցկու, Խերսոնի, Տերնոպոլի, Սումի, Պոլտավայի, Օդեսայի, Նիկոլաեւի, Լվովի, Կիրովոգրադի, Կիեւի, Իվանո-Ֆրանկովսկի, Զապորոժիեի, Անդրկարպատների, ինչպես նաեւ Վոլինի մարզային պետական վարչակազմերի ղեկավարները:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿ՝ ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻՆ

*Ռուսաստանը կենսաթոշակ կվճարի ԵԱՏՄ երկրներից աշխատանքային միգրանտներին, ովքեր վճարում են կատարել ՌԴ կենսաթոշակային ֆոնդին: Դա նախատեսված է ԵԱՏՄ-ում կենսաթոշակային ապահովության մասին համաձայնագրով, որը պատրաստվում է ստորագրման: Ներկա դրությամբ, միգրանտները վճարումներ են կատարում Ռուսաստանի կենսաթոշակային ֆոնդին, սակայն կենսաթոշակ չեն ստանում:*

*ԵԱՏՄ անդամ երկրների միջեւ կենսաթոշակային ապահովության համաձայնագրով առաջարկվում է, որ այն երկիրը, որում միգրանտն աշխատել է եւ կենսաթոշակային ֆոնդին կատարել վճարումներ, պետք է տա կենսաթոշակ՝ նաեւ նրա հայրենիք վերադառնալուց հետո:*

*Փաստաթուղթը, հավանաբար, կստորագրվի աշնանը:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԴԵՊԻ ՆԱՏՕ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՎԱՐՏՎԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հատեց փախստականներին բնակարաններով ապահովելու մասին Վրաստանի ծրագիրը:

Հանդիպմանը խոսեցին նաեւ ապաստան հայցողների հարցի շուրջ, նշվեց, որ նրանց ինտեգրումը նոր մարտահրավեր է Վրաստանի համար: Վրաստանի նախագահը հույս հայտնեց, որ այդ հարցը լուծվելու է միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Հանդիպման ավարտին հաջորդած մամլո ասուլիսում Վրաստանի նախագահը, անդրադառնալով Վրաստանի անվտանգության հարցին, հայտարարեց, որ դրա երաշխիքը ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությունն է:

- Դեպի ՆԱՏՕ տանող ճանապարհը Վրաստանը հաջողությամբ կավարտի,- ընդգծեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ Արեւմուտքում Վրաստանի դաշնակիցները պետք է ավելի շատ գործեն, որպեսզի դիմակայեն այն ճնշմանը, որը Ռուսաստանն է իրականացնում Վրաստանի հանդեպ եվրոպայի հետ ինտեգրացիայի ճանապարհին կանգնելու համար:

Նախագահ Զուրաբիշվիլին հավաստիացրել է, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը կվերականգնվի:

- Իմ կարծիքով, օկուպացված տարածքների բնակչությունը հասկանում է, որ հեռանկարը Հյուսիսում չէ,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

***Հունիսի 10-ին Թբիլիսիում, «Վրացական երազանք» կառավարող կուսակցության կենտրոնակայանում կայացավ կուսակցության հիմնադիր եւ նախագահ Բիձինա Իվանիշվիլու հանդիպումը խորհրդարանական մեծամասնության անդամների հետ:***



Հանդիպմանը քննարկվեցին երկրում օրերս անցկացված միջանկյալ ընտրությունների արդյունքները, կանխագծվեցին կուսակցության առաջիկա ծրագրերը: Հանդիպմանն ընդգծվեց, որ կուսակցության վարած ներքին եւ արտաքին քաղաքական կուրսը վայելում է ժողովրդի վստահությունը, ինչն իր արտահայտությունը գտավ միջանկյալ ընտրություններում «Վրացական երազանքի» անտարակուսելի հաղթանակում:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ԶՈՒՐԱԲ ԱԲԱՇԻՁԵ. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԻՆՔՆԻՇԽԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ Է»

Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն, մեկնաբանելով Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի հայտարարությունն այն մասին, որ Վրաստանի ՆԱՏՕ-ին անդամակցությունը հնարավոր է վտանգավոր լինի վրաց-ռուսական հարաբերությունների համար, ընդգծեց, որ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունը երկրի ինքնիշխան իրավունքն ու ընտրությունն է:

Զուրաբ Աբաշիձեի խոսքով, Ռուսաստանի կողմից Վրաստանի ՆԱՏՕ-ին ինտեգրման հարցի նկատմամբ բացասական վերաբերմունքը զարմանալի չէ, եւ Ռուսաստանն այս դիրքորոշումը գրանցելու համար օգտագործում է բոլոր ծեւաչափերը, սակայն դա Վրաստանի ինքնիշխան ընտրությունն է:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ




## ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԳՐԱՎԱՏՆԵՐՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ ԿԱՐԳԵԼՎԻ

***Վրաստանի Ազգային բանկը խստացնում է երկրում ֆինանսական, միկրոֆինանսական եւ վարկերի ու գրավների գործընթացներ իրականացնող կազմակերպությունների վերահսկողությունը:***

Ազգային բանկի որոշմամբ, հուլիսի 1-ից գրավատները ստիպված կլինեն աշխատել նոր կարգով: Մասնավորապես, կարգելվի գրավատանը գրավադրված առարկան փոխգրավադնել կոմերցիոն բանկերում: Այս մեթոդը հիմնականում գրավատների կողմից օգտագործվում է սեփական վարկերի ապահովման համար: Կենտրոնական բանկի որոշմանը նախորդում էր շուկայական հետազոտությունը, որը գնահատել է գրավադրված գույքի կորստի ռիսկերը: Վարկ տրամադրող սուբյեկտներն ենթադրում են, որ կանոնակարգերի գործարկումից հետո գրավատների մեծ մասն այլեւս չի կարողանա շարունակել իր գործունեությունը:

Համապատասխան փոփոխությունը մտնում է «Վարկ տրամադրող սուբյեկտի՝ Վրաստանի Ազգային բանկում գրանցման, գրանցման չեղարկման եւ կարգավորման կարգի հաստատման մասին օրենք»:

Ազգային բանկում մեկնաբանում են, որ լոմբարդները վարկ ստանալու համար կարող են գրավադնել սեփական ակտիվները:



### ՄԹԱԾՄԻՆԴԱՅՈՒՄ ՀԱՂԹԵՑ ԼԱԴՈ ԿԱԽԱՁԵՆ



*Վրաստանի խորհրդարանի միջանկյալ ընտրությունների՝ հունիսի 9-ին Թբիլիսիի Մթածմինդայի ընտրատարածքում կայացած երկրորդ փուլում, հաղթեց «Վրացական երազանք» իշխող կուսակցության թեկնածու Լադո Կախաձեն: Նա ստացել է 61,83 տոկոս, իսկ նրա մրցակիցը՝ «Ազատ դեմոկրատներ» ընդդիմադիր կուսակցությունից թեկնածու փաստաբան Շալվա Շավգուլիձեն՝ 38,17տոկոսը:*

### ԼՈՆԴԱ ԹՈԼՈՐԱԻԱՆ՝ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ



*Հունիսի 11-ին Վրաստանի խորհրդարանում պատգամավորները քննարկեցին խոսնակ Իրակլի Կոբախիձեի նախաձեռնած օրինանախագծի համաձայն պետական տեսչի պաշտոնի համար ներկայացված Լոնդա Թոլորաիայի եւ Վալերի Լոմուաշվիլու թեկնածությունները: Ինչպես նված է օրինանախագծում, պետական տեսուչն իր գործունեությունը կսկսի հուլիսի 3-ից:*

*Լոնդա Թոլորաիայի թեկնածությանն աջակցել է 82 պատգամավոր, դեմ է եղել 21-ը: Վալերի Լոմուաշվիլու օգտին կողմ է քվեարկել 7 պատգամավոր, դեմ է եղել 21-ը:*

### ԹԲԻԼԻՍՅԱՆ ՋՐՀԵՂԵՂԻՑ ՉՈՐՍ ՏԱՐԻ ԱՆՑ

*21 զոհ, նրանցից երկուսը՝ անհետ կորած, եւ հազարավոր տուժած քաղաքացիներ. հունիսի 13-ի աղետից անցել է 4 տարի:*

*Թբիլիսիում աղետը Վակեի թաղամասի Վերա գետի ափին ոչնչացել էր բնակելի տներ, ճանապարհներ, կամուրջներ: Ամբողջությամբ հեղեղվել էր «Մզիուրիի» եւ Կենդանաբանական այգու տարածքը: Աղետի զոհ էր դարձել գազանանոցը:*

*Այդ օրը Թբիլիսիի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, աղետից տուժվածների հարազատների հետ այցելեցին աղետի գոտում տեղադրված հուշակոթող եւ հարգանքի տուրք մատուցեցին զոհերի հիշատակին:*

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 518 ԴԵՊՔ

Հունիսի 3-9-ը ներառյալ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ մասշտաբով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 518 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները ստուգեցին 3561 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները՝ առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 160 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 51 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 307 փաստ:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները, ստուգիչ միջոցառումների իրականացման արդյունքում, հայտնաբերել են առանց ակցիզի ապրանքների արտադրության եւ մատակարարման օրինախախտման փաստեր: Մասնավորապես, Թբիլիսիի ծովի տարածքում տնտեսական գործունեություն իրականացնող ընկերության ստուգման արդյունքում, հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները հայտնաբերել են առանց ակցիզի 2620 գլանակ սիգարետ եւ 18 լիտր ալկոհոլային խմիչք: Ապօրինի ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է 2137,50 լարի:

Վրաստանի գործող օրենսդրության համաձայն, ապօրինի ապրանքը բռնագրավվել է, գործի նյութերը հետաքննության համար փոխանցվել են ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԾԽԱԽՈՏ

Հունիսի 6-13-ը «Սարփի», «Սադախլո» ավտոմոբիլային եւ «Կարմիր կամուրջ» մաքսային անցակետերում կանխվեցին երկրի տարածք չհայտագրված ապրանքների ներկրման փաստերը: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները կասկածի հիման վրա խուզարկել են Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիներին պատկանող ավտոմեքենաները: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է 16400 սիգարետի չհայտագրված գլանակ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 289-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն, իրավախախտներից առգրավվել է ապրանքը, տրանսպորտային միջոցը, իսկ նրանց պարտադրել են վճարել 1000-ական լարի:

ԿՐԹԱԿԱՆ

# ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՃԻՆ «1+4» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

է: Պետության համար շատ կարեւոր է, որ մեր ռեսուրսները ուրիշ երկրներում չօգտագործվեն: Դրա համար էլ, մեր խնդիրն է, որ այս ծրագիրը շարունակենք ու բարելավենք: Դրանում կօգտագործենք այն ուսումնասիրության արդյունքները, որոնք կպարզաբանվեն՝ որպես դրական կողմեր, ինչպես նաեւ գոյություն ունեցող մարտահիրավերները: Մենք՝ ինքներս առաջին հերթին պետք է լինենք ինքնաքննադատներ: Տեսնենք, թե ինչն է աշխատում, եւ ինչը՝ ոչ, որ մեր քաղաքականության իրագործման հաջորդ փուլում լինենք արդյունավետ,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:



Միջոցառման ավարտին պետական նախարարն իր տեղակալի՝ Լիա Գիգաուրու հետ միասին, «էթնիկ փոքրամասնությունների միջեւ բարձրագույն եւ մասնագիտական կրթության հասանելիության աջակցության» ծրագրի մասնակից երիտասարդներին փոխանցեց վկայագրեր ու խորհրդանշական նվերներ:

Իսկ մինչ այդ, պետնախարարը, հանդես գալով երկրի հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների ներգրավվածության թեմային նվիրված միջոցառմանը, նշեց, որ պետնախարարության աշխատակազմի նախաձեռնությամբ անցկացվել է կլոր սեղան, որի հիմնական թեմաներից մեկը «Ազգային փոքրամասնությունները որոշման կայացման գործընթացում» հարցի հրատապությունը, առկա մարտահիրավերներն ու որոշման ուղիները, պետական տեսլականը եւ քաղաքականությունը, ժողովրդական պաշտոնին կից ազգային փոքրամասնությունների խորհրդի հանձնարարականներն են: Ինչպես նշել է պետնախարարը, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը երկրի հասարակական կյանքում առաջնահերթ ուղղություններից է: Նրա խոսքով, կարեւոր է, որ գոյություն ունի քաղաքացիական ինտեգրման հարցերով միջգերատեսչական հանձնաժողով, եւ այն այդ ուղղությամբ ունի հետաքրքիր արդյունքներ:

- Այսօր մենք մտածում ենք ամենաառաջնահերթ ուղղությունների մասին՝ ինչպես հզորացնել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը երկրի կյանքում, հասարակական կյանքում: Սա, առաջին հերթին, ենթադրում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, նրանց ունակությունների զարգացում, այդ թվում՝ պետական լեզվի իմացության մակարդակի բարելավում:

Մոտ տարի ու կես առաջ, շատ կարեւոր ծրագիր ենք սկսել, որի համաձայն, «1+4 կրթական ծրագրից» օգտվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների համար գործարկվել է պետական տարբեր գերատեսչություններում ստաժավորում անցնելու ծրագիր: Նրանց համար բաց են պետական բոլոր գերատեսչությունների դռները,- հայտարարել է Քեթեւան Ցիխելաշվիլին:

Միջոցառմանը լսարանին ողջունել են նաեւ Վրաստանի ժողովրդական պաշտպան Նինո Լոմջարիան եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության սոցիալական զարգացման ուղղության ղեկավար Թամար Սիրբիլաձեն:

Ավելացնենք, որ ծրագրի աջակիցներն ու միջոցառման կազմակերպիչներն են նաեւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Վրաստանի՝ ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության եւ ինտեգրման աջակից» ծրագիրը (PITA)-ն:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՍԿՍՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

***Հունիսի 13-ին Վրաստանի հանրային դպրոցներում սկսվեց կրթօջախներում գրանցված առաջին դասարանցիների ընդունելության գործընթացը:***

Հանրակրթական հաստատություններում երրորդ փուլում գրանցված աշակերտի ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումն իրականացվելու է 2019 թվականի հունիսի 13-21-ը ներառյալ: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, գրանցումը չեղարկվում է:

Առաջին դասարան ընդունվելու համար, հարկավոր է ներկայացնել հետեւյալ փստաթղթերը.

* Աշակերտի օրինական ներկայացուցչի դիմումը, որը պետք է ընդգրկի օրինական ներկայացուցչի բնակելի վայրի եւ հեռախոսահամարի մասին տեղեկություն,

* Աշակերտի ծննդյան վկայականի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը եւ Վրաստանում բնակությունը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում):

Դրա հետ մեկտեղ, դպրոցն իրավունք ունի պահանջել աշակերտի լուսանկարը եւ այլ փատաթղթեր: Այդ թվում՝ առողջության մասին տեղեկանք:

Ինչ վերաբերում է գրանցման չորրորդ փուլին, որը շարունակվելու է հունիսի 25-ից հուլիսի 5-ը ներառյալ, այդ փուլում դպրոցի բազաներում, ազատված թափուր տեղում եւ մնացած ազատ տեղերում կիրականացվի այն աշակերտների գրանցումը, որոնք չեն գրանցվել առաջին, երկրորդ կամ երրորդ փուլերում:

# ՀԱՄԵՐԳ-ՄՐՑՈՒՅԹ՝ «ՈՐ ԳԱՐՈՒՆՆԵՐԸ ԳԱՆ ՈՒ ՉԳՆԱՆ»

***«Որ գարունները գան ու չգնան». այս անունն էր կրում մայրաքաղաքի թիվ 103 հանրային դպրոցի հայկական բաժանմունքի չորրորդ դասարանի աշակերտների հանդեսը:***



Տոնական զարդարված դահլիճում թեւածում է ուրախ տրամադրություն: Հաշվետու համերգ- ցերեկույթը նվիրված էր չորս տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքներին ու առաջին ուսուցչուհուն: Չորրորդ դասարանցիները կարողացան գեղեցիկ ձեւով դրսեւորել իրենց հայերենի իմացությունն ու խոստացան անաղարտ պահել մայրենին: Հանդիսության մի հատվածը նվիրված էր հայրենիք Վրաստանին, վրաց լեզվին ու սիրելի քաղաք Թբիլիսիին: Վրացերենով հնչած բանաստեղծությունները, խոսքն ու երգը նույնպես անթերի էին ու տպավորիչ: Այնուհետեւ հասավ պահը, երբ աշակերտները երախտագիտությամբ ու սիրով լի հրաժեշտի խոսքեր հղեցին իրենց առաջին ուսուցչուհուն՝ տիկին Լուիզա Մուրադյանին, ով նրանց տառաճանաչ էր դարձրել, զինել գիտելիքների հարուստ պաշարով ու ցուցաբերել հոգատար վերաբերմունք սաներից յուրաքանչյուրի նկատմամբ: Դասարանն իր շնորհակալության խոսքն ուղղեց նաեւ մյուս ուսուցիչներին ու դպրոցին: Փոքրիկները ներկայացրին իրենց դասերից մեկի բեմականացումը: Միջոցառումը համեմված էր մանկական երգերով ու պարերով (պարուսույց՝ Անգելինա Նազարյան-Քոչյան): Ավարտին, I-IV դասարաններում կատարված աշխատանքները ցուցադրվեցին տեսահոլովակի միջոցով եւս:

Ուսուցչուհու բարեխիղճ աշխատանքը, սաների իմացության մակարդակը եւ ծնողների ակտիվ ընդգրկվածությունն ուսումնադաստիարակչական գործընթացին բարձր գնահատեցին տնօրեն Ա. Չխաիձեն, ուսմասվար Հասմիկ Պապիկյանը ու տողերիս հեղինակը:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

***Վրաստանի ներքին գործերի նախարարության կողմից երկրի խորհրդարանին ներկայացված օրինանախագիծը նախատեսում է վարորդական իրավունքների ստացման համար քննությունների կարգի որոշակի փոխություն: Փոխվում է քննության սակագինն ու ներկայացվելիք փաստաթղթերի ցուցակը, ինչպես նաեւ արտոնություններ են սահմանվում ուսանողների համար:***

Վրաստանում վարորդական իրավունք ստանալու քննությունների գործնական մասը կդառնա երկփուլային: Առաջին փուլը (հատուկ մանեւր), կանցկացվի փակ քննական հրապարակում, ինչպես իրականացվում է ներկայումս, իսկ այն հաջողությամբ հանձնելու դեպքում, երկրորդ փուլը կանցկացվի իրական ճանապարհային երթեւեկության պայմաններում՝ նախապես ընտրված եւ ՆԳ նախարարության կողմից հաստատված ճանապարհներով: Ելնելով վերոնշյալ փոփոխությունից՝ փոխվում է նաեւ գործնական քննության սակագինը: Ըստ ՆԳ նախարարության պատրաստած օրինագծի, տրանսպորտային միջոցների վարորդական իրավունք ստանալու համար, քննության «մուտքը» կդառնա 20 լարի, նախկին 40 լարիի փոխարեն:



«B» կատեգորիայի տրանսպորտային միջոցների վարորդական իրավունք ստանալու գործնական քննության առաջին փուլում միանգամյա մուտքի արժեքը կդառնա 40 լարի, իսկ երկրորդ փուլում միանգամյա մուտքը կլինի 90 լարի:

«A», «C», «D», «BE», «CE», «DE» կատեգորիաների «A1», «A2», «B1», «C1», «D1», «C1E» եւ «D1E» ենթակատեգորիաների տրանսպորտային միջոցների վարորդական իրավունքի գործնական քննության առաջին փուլում միանգամյա մուտքի վճարը 40 լարի կլինի, իսկ երկրորդ փուլում միանգամյա մուտքը կարժենա 150 լարի:

Փոփոխություն է կատարվում նաեւ վարորդական իրավունքի ստացման տեսական քննության ժամկետներում: Ըստ օրինանախագծի, վարորդական իրավունք ստանալու տեսական քննության ժամկետը 30 օրից հնարավոր է դառնա մեկ տարի:

Դրա հետ մեկտեղ, փոփոխություններով, որոշ գումարի դիմաց (40 լարի) անձը իրավունք կունենա վարորդական վկայականը վերցնել ժամկետից շուտ, մեկ աշխատանքային օրում, թեկուզ քննություն հանձնելու 2-րդ կամ 3-րդ օրը:

Վերջում ավելացնենք, որ օրինանախագիծը որոշ արտոնություններ է սահմանում ուսանողների համար: Մասնավորապես, ուսանողն իրավունք կունենա AM (մոպեդ) կատեգորիայի տրանսպորտային միջոցի վարորդական իրավունք ստանալու համար, տեսական քննությունը հանձնել միայն մեկ անգամ: Քանի որ նշված կատեգորիայի վարորդական իրավունք ստանալու համար գործնական քննության անհրաժեշտություն չկա, ուսանողը տեսական քննությունը հանձնելու դեպքում, այն կստանա անվճար:

Կփոխվի նաեւ մոտոցիկլետի եւ թեթեւ ավտոմեքենաների վարորդական իրավունքի համար հաստատված նվազագույն տարիքը:

«A1» ենթակատեգորիայի եւ «B» կատեգորիայի տրանսպորտային միջոցների վարորդական իրավունքի վերաբերյալ հաստատված նվազագույն տարիքը, 17-ի փոխարեն, կդառնա 18 տարեկան:

Համաձայն փոփոխության, մինչեւ 18 տարեկան անձը կկարողանա ստանալ միայն AM (մոպեդ), T (տրակտոր) եւ B1 (կվադրոցիկլ) կատեգորիայի/ենթակատեգորիայի տրանսպորտային միջոցի վարորդական իրավունք:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*